ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 424
*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված
ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման
աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
*ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Շողակն բնակավայրը) ներառող
միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի
փոփոխության վերաբերյալ*
*(Ապարան համայնքի (Շողակն բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Շողակն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի (Շողակն բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-077-0174-0023 կադաստրային ծածկագրով 0.02 հա մակերեսով անտառային նպատակային նշանակության անտառ հողեր | 02-077-0174-0023 կադաստրային ծածկագրով 0.02 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Շողակն բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող՝* | | |
| | | Լ.Պալյան |

Երևան, « 8 » «նոյեմբերի» 2024թ.